

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բորոխյան,
Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան

ԼԱՆՂԱՖՏԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր. հին շրջան, լանդշաֆտ, հնագիտական, հնագույն հասարակություն, բնական միջավայր, տիպաբանություն, պատմական և մշակութային լանդշաֆտ, հուշարձան, մեթոդներ, բրոնզի դարաշրջան:

Մուտք: Պատկերացումները աշխարհագրական միջավայրի ու դրա բաղադրատարրերի մասին էական դեր են խաղացել վաղ հասարակություններում ինքնության ձևավորման գործընթացում: Կախված բնապատմական միջավայրից՝ յուրաքանչյուր հասարակություն ստեղծել է արժեքային յուրահատուկ համակարգ և փորձել այն զարգացնել ու մոդելավորել ժամանակի ու տարածության մեջ: Անտիկ շրջանից սկսած տեղանքի, լայն իմաստով՝ տարածության ընկալման և հասարակական կյանքին դրա ունեցած ներգործության խնդիրը եղել է մարդկային մտքի ուշադրության կենտրոնում: Այսպես Արիստոտելը անդրադարձնալով այս խնդրին նշում էին, բնականության համար Երկրի պիտանելիությունը կախված աշխարհագրական լայնությունից: Մոնթեսքյուն ուղղակի կախվածություն էր տեսնում բնական պայմանների և բնավորության, կրոնի, կառավարման եղանակի միջև¹:

Այսօր էլ հնագույն հասարակությունները արժեվորելու գործում կարևորվում է պատմամշակութային և աշխարհագրական միջավայրի (լանդշաֆտի, հաբիտատի) հետազոտության՝ այսինքն մարդու և շրջակա միջավայրի փոխգործակցության խնդիրը, որը ենթադրում է բնական միջավայրի մարդու կենսագործունեության և մարդու՝ բնական լանդշաֆտների վրա ազդեցության համալիր ուսումնասիրությունը²

Յուրաքանչյուր մշակույթ զարգանում է որոշակի տարածության ոլորտում՝ իրեն բնորոշ ռելիեֆով, լանդշաֆտային և բնակլիմայական պայմաններով³: Բնական պայմանները և դրանցից բխող տեղանքային առանձնահատկությունները հաճախ հանդիսանում են հնագույն քաղաքակրթությունների առաջացման և վերացման հիմնական գործոնները:

Միևնույն ժամանակ հասարակական զարգացումները անխուսափելիորեն վերափոխում են բնական տեղանքը՝ հարմարեցնելով այն իր պահանջներին և վերածելով մշակութայինի⁴, քանի որ մարդկությունը զարգանում է ոչ միայն ֆիզիկական, այլև որո-

Հոդվածը ներկայացվել է 04.02.2019 թ., գրախոսվել է 19.02.2019 թ., ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:

¹ Джеймс П., Мартин Дж., Все возможные миры: история географических идей, Москва, 1988, с. 53, 156.

² Дмитриев В. Е., Белокобыльский В. Ю., Палеогеографические аспекты археологии каменного века, // «Методологические проблемы реконструкций в археологии и палеоэкологии», Новосибирск, 1989, с. 261. Кузьмин Я., Геоархеологическое исследование древних культур камня юга Дальнего Востока России (методологические подходы, результаты, проблемы) // «Методы естественных наук в археологических реконструкциях» Ч. 1, Новосибирск, 1995, с. 85.

³ Бродель Ф., Грамматика цивилизаций, Москва, 2008, с. 39.

⁴ Джеймс П., Дж. Мартин, նշվ. աշխ., էջ 261: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Օ. Շյուտերը, ում և պատկանում է «մշակութային լանդշաֆտ» եզրույթը, մարդուն ներառելով լանդշաֆտի մեջ, քաղաքական կազմավորումները, կրոնական հավատալիքները չէր դիտարկում որպես ուսումնասիրության օբյեկտ, գտնելով, որ դրանք կարող են միայն օգտագործվել լանդշաֆտային առանձնահատկությունների բացատրման և մեկնաբանության նպատակով (տես նույն տեղում էջ 261-264): Անդրադարձնալով այս հիմնախնդիրին Վ. դե լա Բլանշը և Ժ. Բրյունը աշխարհագրական բոլոր իրողությունները դիտարկում են մի-

չակի սոցիալական և հոգևոր տարածություններում: Վ. Վերնարդսկին, գտնելով, որ մարդկությունը իբրև կենդանի օրգանիզմ կապված լինելով բիոսֆերայի նյութական-էներգետիկ բոլոր գործընթացների հետ, վերափոխում է բիոսֆերան վերածելով այն նոոսֆերայի՝ գիտակցության ոլորտի¹: Այսպիսով, ցանկացած մարդկային հանրության սոցիալական հարաբերությունների ամբողջությունը կարծես դաջվում է տարածություն վրա, որը դառնում է տվյալ հասարակության պարփակ/սահմանային կենսատարածք՝ հաբիտատը²:

Լանդշաֆտի ուսումնասիրության մեթոդները: Հնագիտական միջավայրի վերակազմության նպատակով տեղանքի ուսումնասիրության կարևորությունը ընդգծվել է դեռևս հուշարձանների հետազոտության վաղագույն էտապներից: Այսպես, եվրոպական մեգալիթյան հուշարձաններն ուսումնասիրողները հատուկ արժևորում էին ջրի աղբյուրը (այդ թվում նաև ջրհորը) և քարանձավը³, ինչպես նաև բնական բարձունքի առկայությունը: Նկարագրելով Ֆրանսիայի մեգալիթյան հուշարձանները, Դ. Օսին նշում է, որ մեգալիթները տեղադրված էին Լուարայի երկայնքով: Դրանց զուգահեռ էին գտնվում դամբանաբլուրները⁴:

Պալեոլանդշաֆտի վերակազմության ընթացքում օգտագործվում են նաև գրավոր աղբյուրների⁵, երկրաբանական հետազոտությունների⁶, հնահողագիտության⁷ հնաբուսաբանության⁸ տվյալները: Պալեոլանդշաֆտի վերակազմության գործում մեծ դեր ունի տիեզերական լուսանկարների օգտագործումը⁹:

այն մարդկային գործունեության համատեքստում. ա. հողերի օգտագործումը բնակավայրեր և ճանապարհներ կառուցելու, բ. հողերի յուրացումը երկրագործության և անասնապահության զարգացման նպատակով, գ. բնական պաշարների սնանկացումը մարդկային գործունեության պատճառով (տես նույն տեղում՝ էջ 280-285, ինչպես նաև նաև Бродель Ф., նշվ. աշխ., էջ 390): Ա. Լեֆերն այս գործընթացն անվանում է «տարածքային պրակտիկա», որի տակ ընկալվում է ենթադրում է տվյալ հասարակության՝ իրեն հատուկ տարածք ստեղծելու ունակությունը (Левфер А., Производство пространства, Москва, 2015, с. 39, 42):

¹ Вернадский В. И., Несколько слов о ноосфере. // «Успехи современной биологии», 1944, թիվ 8, с. 117. Աշխարհագրական դետերմինիզմի դպրոցի ներկայացուցիչներից մեկի՝ Լ. Մեչնիկովի կարծիքով, բնական տեղանքի քաղաքակրթական զարգացումը անհնար կլիներ առանց կազմակերպված մարդկանց խմբերի համակցված ջանքերի գործադրման (Мечников Л. И., Цивилизация и великие исторические реки (географическая теория прогресса и социального развития, //«Среднерусский вестник общественных наук» 2008, N 2, с. 123-124, Г. В. Плеханов Сочинения, т. VII, Москва-Петроград, 1923, с. 21):

² Бродель Ф., նշվ. աշխ., էջ 40, հմնտ. Плюсин Ю. М., Этологические подходы к проблеме археологических реконструкций // «Методика и методология археологических реконструкций», Новосибирск, 1994, с. 36.

³ Հմնտ. Borlase W., Antiquities Historical and Monumental of the County of Cornwall, London, 1769, p. 119, Сизов В., Восточное побережье Черного моря // «Материалы по археологии Кавказа», вып 2, Москва, 1889, с. 170, Фавр А., О памятниках некоторых народов варварских, древле обитавших в нынешнем Новороссийском крае // «Записки Одесского общества истории и древностей», т. 2, Одесса 1848, с. 41-42.

⁴ D'Aussy, Memoire sur les anciennes sepultures nationales et les ornemens extérieurs qui en divers temps y furent employes sur les embaumemens, sur les tombeaux des rois francs dans la ci-devant eglise de Saint-Germain des Pres, et sur un projet de fouilles a faire dans nos departmens, // «Memoires de l'Institut National des sciences et arts, sciences morales et politiques», II, Paris An VII, [1799], p. 569.

⁵ Հմնտ Ավդալբեկյան Թ., Արաքսի հնադարյան հունն Արարատյան դաշտում, // Ավդալբեկյան Թ., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1969, էջ 80-100, Սարգսյան Ա., Հին Վաղարշապատի տեղադրությունը ըստ հնագիտական և մատենագրական տվյալների, // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, թիվ 7, էջ 52-69:

⁶ Հմնտ՝ Саядян Ю.В., Алешкинская Э. В., Ханзадян Э.В, Послеледниковые отложения и археология побережья оз. Севан// «Геология четвертичного периода (плейстоцен)», Е., 1977, с. 91-103.

⁷ Հմնտ. Деревянко А. П., Дергачева М. И., Использование принципов и методов почвоведения в археологии палеолита // «Методы естественных наук в археологических реконструкциях» Ч. 1, 98-103:

⁸ Հմնտ Туманян М. Г., Избранные труды, Ереван 1957, с. 164-168, 204-208:

⁹ «Google Earth» համակարգի տիեզերական եռաչափ լուսանկարներով լանդշաֆտի ուսումնասիրության մեթոդը մասնավորապես կիրառվել է Գ. Սարգսյանի կողմից ԱՀ Քաշաթաղի շրջ հուշարձանների հավաստման ընթացքում: Ընդամենի կասկածելի կետերը համադրվում են 1:25 000 և 1:50 000 տոպոգրա-

Կիրառվում է նաև օդային լուսանկարումը: Հուշարձանների հաստատագրման այս մեթոդը սկիզբ է առել դեռևս XIX դ. վերջից, երբ օդապարիկից լուսանկարվեց Սթոունհենջի համալիրը և առավել զարգացում ստացավ Առաջին աշխարհամարտից հետո¹: Հետազոտությունների այս մեթոդը թույլ է տալիս հաստատագրել ոչ միայն այսօր գոյություն ունեցող տեղանքը, ճշտորիտ ուրվագծել մեծ տարածք զբաղեցնող օբյեկտները (ավերված բնակավայրերը, դամբարանադաշտերը), այլև հավաստել գետերի հնահունները, հին ջրանցքների հետքերը: Այս հետազոտությունների հիմքն այն փաստն է, որ բնահողի ցանկացած տեղաշարժ անջնջելի հետք է թողնում տեղանքի վրա: Այսօրվա բնահողի շերտի տակ գտնվող հնագույն օբյեկտների հետքերը օդային լուսանկարչության ժամանակ կատարվում է հետևյալ տվյալների հիման վրա. մակերեսի միկրոռելյեֆի ստվերները առավոտյան կամ երեկոյան թեք լուսավորության ներքո, բնահողի գունավորման և բուսականության տարբերությունները²:

Վաղ հասարակությունների սոցիալ-տնտեսական և ծիսապաշտամունքային տեղանքի ուսումնասիրության համար ներկայումս կիրառվում է Աշխարհագրական տեղեկատվական համակարգը՝ GIS («Geographic Information System»), որը հանդիսանում է համակարգչային համապատասխան ծրագրով աշխատող գործիք և որի միջոցով կազմակերպվում է աշխարհագրական տվյալների կուտակումը տվյալների շտեմարանում, այնուհետև՝ քարտեզագրումը և վերլուծությունը³: Քարտեզները թեմատիկ բովանդակություն կրող տարածքի փոքրացված և համակարգված պատկերներ են, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել, վերլուծել վաղ հասարակությունների համար կենսական նշանակություն ունեցող բնական միջավայրի բաղադրատարրերի դերը և դրանից ձևավորվող մշակութային, սոցիալական գործոնները: Ըստ իրենց հատկանշների ու առանձնահատկությունների՝ GIS քարտեզները լինում են երկչափ (2D) և եռաչափ (3D): Հնագիտության համար հատկապես կարևոր է GIS-ի միջոցով վերականգնել փոփոխությունների ենթարկված լանդշաֆտը (հանքարդյունաբերության հետևանքով շահագործված և խեղաթյուրված լեռներն ու բլուրները), ուսումնասիրել դրանք և ապա թվայնացնել, մոդելավորել ու դիտարկել եռաչափ մոդելի ներքո: GIS-ը կարող է ուսումնասիրել ցանկացած հնագիտական հուշարձան և միջավայր՝ սկսած ընդհանուր մակարդակներից (հնագիտական միջավայրի անհատական և խմբակային հուշարձաններ) մինչև վերացական-մշակութային: Ներկայումս քարտեզագրության և դրանց երկչափ ու եռաչափ մոդելավորման համար օգտագործվում են թվայնացված խորհրդային 1:10 000, 1:25 000 և 1:50 000 տոպոհանույթները և SRTM 1 (30 մետր) և 3 (90 մետր) Arc second resolution արբանյակային DEM (Digital elevation model = Թվային բարձրությունների մոդել) ռելեֆի բարձրությունների մակերեսի տվյալները: Խնդիր է դրվում հնարավորինս բացարձակ կետերով ճշգրտել և ստուգել լանդշաֆտի բարձրությունները, ապա՝ քարտեզների եռաչափ մոդելավորմամբ դիտարկել նշված հուշարձանները այլ կետերից և դրանց փոխկապակցվածությունը՝ վերականգնելով կարևոր նշանակություն ունեցող ճանապարհ(ներ)ի սահմանները, ջրագրությունը:

Հնագիտական հուշարձանների ուսումնասիրության, լանդշաֆտի վերլուծության և քարտեզագրության համար GIS-համակարգը առաջատար դիրք է զբաղեցնում, որն աշխատելով տարածական տիրույթում, տվյալներն արտահայտում է պայմանական X (երկայանական), Y (լայնական), Z (բարձրություն ծովի մակերևույթից) չափորոշիչների միջոցով: Ցանկացած տեսակի հնագիտական միջավայր նույնպես արտահայտվում է X-Y-Z չափորոշիչներով: GIS-ի կիրառմամբ ավելի ամբողջական է դառնում հնագիտական

ֆիական քարտեզների հետ, լրացվելով այնտեղ պարունակվող տվյալներով: Տե՛ս Սարգսյան Գ., Գնունի Ա., Հակոբյան Ա., Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգի ձևավորումը մ.թ.ա. II-I հազարամյակում // «Վեմ», 2014 թիվ 1, էջ 150-151:

¹ Мартынов А. И., Шер Я. А., Методы археологического исследования, Москва 1989, с. 39.

² Авдусин Д. А., Полевая археология СССР, Москва, 1980, с. 69-72, А. И. Мартынов, Я. А. Шер, նշվ. աշխ., էջ 40-41, Дойель Л., Полет в прошлое, Москва 1979, с. 15-17, 47-63.

³ Մանրամասների համար հմնտ. Conolly J., Lake M., Geographical Information Systems in Archaeology, Cambridge, 2006:

հուշարածանից պեղված նյութի տեղադրումը (վիրտուալ տարածական միջավայր), համարակալումն ու քարտեզագրումը, որը հնագետին տալիս է աշխարհագրական միջավայրի մասին առավել ամբողջական տեղեկատվություն՝ դառնալով ավելի արդյունավետ և ստեղծելով ինտերակտիվ քարտեզներ, ինչն իր հերթին, հանգեցնում է տվյալների շտեմարանում հնագիտական բազմաթիվ հուշարձանների ցանկերի ձևավորմանը՝ ստեղծելով վիրտուալ աշխարհագրական կորդինատներով հագեցված կետեր (ըստ իրենց հատկանշների): GIS-ը հնարավորություն է տալիս ոչ միայն ամրագրել հնագիտական հուշարձանների տարածական բաշխվածությունը այլ նաև կանխատեսել, գտնվելու վայրը, կատարել տարա/համաժամանակյա հուշարձանների դասակարգում¹:

Բնագիտական-քանակական մեթոդների կիրառմամբ հնագիտությունը ձեռք է բերում նոր գործիքներ, որոնք ապագայում հնարավորություն կտան հիմնավորելու կամ ժխտելու տարածության ընկալման պատմական-որակական ըմբռնումները:

Պատմամշակութային լանդշաֆտի կառուցվածքը: Կառուցվածքային տեսանկյունից պատմամշակութային լանդշաֆտը կարելի է բաժանել մի քանի բաղադրատարրերի, որոնք ներառում են բնական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-ժխական ոլորտները:

ա. Բնական: Յուրաքանչյուր հասարակություն ձևավորվում է կոնկրետ բնական պայմաններում, որոնք շատ դեպքերում համապատասխան հասարակական և հոգևոր կյանքի ձևավորվման ընթացքում դառնում են վճռորոշ: Բնական միջավայրը իրականում հանդիսանում է յուրատեսակ առանցք, որի շուրջ և որը վերափոխելով խմբվում են մշակութային լանդշաֆտի բաղադրատարրերը: Բնական պայմանները կարելի է դիտարկել մի քանի հարթություններով:

Առաջին հերթին պետք է դիտարկել կլիմայական պայմանները²: Այսպես, Ք. ա. V-III հազ. կլիմայական օպտիմումի պայմաններում հնարավոր եղավ Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունների առաջացումը և հակառակը Ք. ա. III հազ. երկրորդ կեսի չորայնացման գործընթացներով էր պայմանավորված քաղաքական ձգնաժամը Մերձավոր Արևելքում³: Հայկական լեռնաշխարհի համապատասխան բնակլիմայական պայմանների արևայությունը նպաստեց տարածաշրջանում խաղողագործության և գինեգործության զարգացմանը⁴:

Տվյալների հաջորդ խումբն առնչվում է տարածքի բնական պաշարներին և բնահողի հատկություններին: Բնահողը բացառիկ տեղեկատվություն է տրամադրում լանդշաֆտի վերակազմության համար, քանի որ հենց բնահողը իր հատկությունների շնորհիվ առավելագույն տեղեկատվություն է պարունակում շրջակա միջավայրի մասին: Փաստորեն բազմաշերտ հնագիտական հուշարձանների նստվածքները կարելի է դիտել, որպես բնահողի նստվածքների համալիրներ, որոնց կայուն հատկանիշները, թույլ են տալիս վերակազմել հին մարդու բնակության պայմանները⁵: Օգտակար հանածոների հանքերը ևս նպաստում էին բնակավայրերի առաջացմանը: Այսպես, սկսած վաղ բրոնզի դարաշրջանից Հայաստանում առաջանում են մասնագիտացված բնակավայրեր, օրինակ Ֆիլիտտովոն, որի բնակիչները մասնագիտանում էին պղնձի արդյունահանման և հարստացման գործում⁶, իսկ Շենգավթի¹, Քյուլ թեփեի², Սուրմալուի շրջանի տնտեսական հզորության պատճառը մոտակայքում գտնվող աղի հանքն էր:

¹ Տե՛ս Ավետիսյան Հ., Բորոխյան Ա., Գնունի Ա., Դանիելյան Հ., Լանդշաֆտի մոդելավորումը վաղ հասարակություններում և նրա ուսումնասիրության արդի հիմնախնդիրները // «Հայաստանի հնամարդաբանության և հնաժողովրդագրության հարցեր», միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ, Ե., 2016, էջ 6-8:

² Кареев Н., Историология, Петроград 1915, с. 69-74.

³ Burroughs W. J., Climate Changes in Prehistory, Cambridge 2005, p. 239, 252-253.

⁴ Տե՛ս Հարությունյան Ա., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հոբոսյան Ա., Ավետիսյան Պ., Գինին հայոց ավանդական մշակույթում, Ե., 2005, էջ 12-17: Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Գասպարյան Բ., Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորոխյան Ա., Ոգելից խմիչքների հիշատակությունները Աստվածաշնչում // «Էջմիածին», 2016, Ժ, էջ 127-129:

⁵ Деревянко А. П., М. И. Дергачева, նշվ. աշխ., էջ 103, Н. Кареев, նշվ. աշխ., էջ 74:

⁶ Геворкян А., Пальмиери А., Фиолетово // «Հայաստանի հնագույն մշակույթ», Հ. Մարտիրոսյանի հիշատակին նվիրված հանրապետական գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ», էջ 11-13:

Տվյալների երրորդ խումբն առնչվում է ջրի աղբյուրին³: Այսպես, Հայաստանում, վաղ բրոնզի դարաշրջանում բնակավայրերի առավել մեծ կենտրոնացում է նկատվում խիտ ջրագրական ցանցով տարածքներում Եփրատի վերին ավազան, որտեղ բնակավայրերը տեղադրված են ոչ միայն Վերին Եփրատի, Արածանիի, Մեղրագետի երկայնքով, այլև դրանց բազմաթիվ վտակների և առուների ափերին⁴, Արարատյան դաշտում բնակավայրերի կենտրոնացում է նկատվում Էջմիածնի տարածաշրջանում, որտեղ հոսում էր Մեծամոր գետն, որ այն ժամանակ ընդունում էր Քասախի երկու բազուկների, Ագատի, Հրազդանի ջրերը⁵: Ջրի աղբյուրը կարող էր հիմք հանդիսանալ նաև սրբազործված տարածքի ձևավորման համար: Այսպես, հուշարձաններով հարուստ Ալ լճերի ավազանը լինելով Արփա, Որոտան և Տրտու գետերի վերնահոսանքների ջրահավաք ավազան, ստորգետնյա խորքային արտահոսքով կապված է Սևանի արտեզիան ավազանի հետ՝ Պալեոմասրիկի թաղված հովտով⁶:

Այս համատեքստում պետք է քննության առնել նաև բնական ճանապարհները և ճանապարհային խաչմերուկները, բնական բարձունքները, քարանձավները, քարայրները, ժայռային ապաստանները: Այսպես, օրինակ՝ Ք. ա. III-I հազ. Սյունիքում գետահովիտները և դրանցով անցնող ճանապարհները հանդիսանում էին այն առանցքը, որի շուրջ խմբավորվում էին բնակավայրերը՝ ստեղծելով փոխկապակցված պաշտպանական շրջաններ⁷:

Տվյալների հաջորդ խումբն առնչվում է կենդանաբանության և բուսաբանության տվյալներին⁸: Անտառապատ տեղանքը, մասնավորապես գետամերձ անտառների առկայությունը մեծապես նպաստել է հինարևելյան քաղաքակրթությունների առաջացմանը: Եփրատի վերին ավազանի անտառները հումքային բազա էին մերձավորարևելյան քաղաքակրթությունների համար, ինչը չէր կարող չնպաստել տվյալ տարածքների սոցիալական զարգացմանը⁹:

բ. Սոցիալ-տնտեսական: Այստեղ բաղադրատարրի կարևորագույն միավորը բնակավայրերն են: Ընդ որում, բնակավայր հասկացությունը պետք է դիտարկել համալիր՝ ներառյալ ազլոմերացիայի ողջ գոտին (միջնաբերդը, «արտաքին քաղաքը», արբանյակները, դիտակետերը, կենսաապահովման կառույցները՝ ջրանցքներ, ջրամբարներ, դաշտեր, ամրացված փարախներ): Այս առումով հատկանշական է Մոխրաբլուրի օրինակը, որը վաղ բրոնզի դարում հանդիսանալով տարածաշրջանի կենտրոնական բնակավայր, իր «ձգողականության գոտում» ուներ մի շարք արբանյակ-բնակավայրեր, այդ թվում նաև Մոխրաբլուրի սեգմենտավորման արդյունք հանդիսացող Ադաբլուր ամրացված բնակավայրը, ինչպես նաև հարակից այլ բնակավայրերը (փաստագրված Ս. Հ-

¹ Տե՛ս Սիմոնյան Հ., Շենգավիթ. շարքային բնակավայր, թե վաղ քաղաք // «Հուշարձան», Ը, Ե., 2013, էջ 8:

² Ըստ ավանդույթի Կուլապի և Նախիջևանի աղի հանքերի առաջին բանվորը հենց Նոյ նահապետն էր (Никитин К. А, Город Нахичевань и Нахичеванский уезд // «Сборник материалов по описанию местностей и племен Кавказа» II, Тифлис, 1882. с. 110):

³ Кареев Н., նշվ. աշխ., էջ 79-84: Լ. Մեչնիկովը, ընդհանրապես բոլոր քաղաքակրթությունները բաժանում է գետային բռնապետությունների, ծովային ժողովրդավարությունների և ապագայի օվկիանոսական հավասարության (Мечников Л. И., նշվ. աշխ., էջ 123-124):

⁴ Rowton M., The Woodlands of Ancient Asia // «Journal of Near Eastern Studies» (then-JNES) 26/4, p. 262-264.

⁵ Տե՛ս Խանգադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., Մեծամոր, Ե., 1973, էջ 7-9, Թադևոսյան Ա., Վաղարշապատի նախաքրիստոնեական հուշարձանների ուսումնասիրման պատմությունը և Ռաֆիկ Թորոսյանի ներդրումը // «Էջմիածին», 2016, Ա., էջ 232-235:

⁶ Халатов В. Ю., Гагинян Р. Х., Геоэкологические аспекты рационального использования подлазовых вод вулканических областей Республики Армения // «Вестник Московского городского педагогического Университета», 2008, N 2, с. 24.

⁷ Տե՛ս Սարգսյան Գ., Գնունի Ա., Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 168-170:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 75:

⁹ Brandt M., Nippur: Building and environmental model // «JNES», 1990, 49/1, p. 67, Wallon R., Cantman S., Early Bronze Development in the Keban Eeservoir East-Central Turkey // «Current Anthropology» 1969 X/1, p. 130.

ռիփսիմե եկեղեցու, Մայր Տաճարի, Զվարթնոցի, Ս. Գայանե եկեղեցու, Թեղուտի, Շահունյանի տարածքում)¹: Մոխրաբլուրյան ազլոմերացիան ներառում էր նաև ոռոգման համակարգը (Քասախ գետի բազուկի վրա կառուցված պատվարը)²: Արագածի հարավային լանջը և Գեղամա լեռները մ. թ. ա. III-1 հազ. ներառված էր խոշոր ջրահավաք-ջրաբաշխիչ համակարգերի մեջ, որոնք ներկայացված էին արհեստական առուներով, ավազաններով և այլն³: Բացառված չէ, որ նմանատիպ համակարգ գոյություն ուներ նաև Արարատ լեռան լանջերին, ինչպես նաև Փոքր և Մեծ Մասիսները բաժանող գոգավորության վրա⁴: Կապուտանի ամրոցի մոտակայքում ևս գտնվում էր անձրևաջրերի ջրահավաք պատվարների համակարգ⁵:

Տնտեսական ենթակառուցվածքների ևս մեկ օրինակ է ԱՀ Քաշաթաղի շրջանի Աղավնո գետի վերնահոսանքում գտնվող Հակ-Եզնագոմեր-Արվական ամրացված հանգույցը, որը ներառում է Սպիտակաջրի, Եզնագոմերի, Աղվեսահաքիի, Հակի ամրոց-բնակատեղիները, Եզնագոմերի բաց բնակատեղին, ինչպես նաև Հակի և Եզնագոմերի ամրացված փարախները⁶:

Հատկանշական է, որ տեղանքի մոդելավորումը առկա է ոչ միայն մակրոմակարդակում: Արդեն Ք. ա. III հազ. բնակավայրերում հանդես են գալիս կանոնավոր ճարտարապետության տարրեր. փողոցներ, հրապարակներ, արհեստագործական և գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար նախատեսված հատվածներ⁷: Այսպես, ամենայն հավանականությամբ, ոռոգման համար էին ծառայում Ասլանթեպեի VIB1 շերտում հայտնաբերված է ջրի երկու ավազանները⁸: Բնակավայրերի առանձին հատվածներում կարող էին կենտրոնացված լինել գյուղատնտեսական մթերքների պահպանման և վերամշակման (Յանիկ թեփեի կենտրոնական հատվածում տեղադրված ցորենի համայնական շտեմարանը, Արսլանթեպեի սպանդանոցը⁹) և արհեստագործական հատվածները (Արսլանթեպե, Թեթրի Ծղարո¹⁰)

գ. *Հոգևոր-ծիսական*: Տվյալ խմբում կարելի է միավորել մեծածավալ (տաճարներ և տաճարական համալիրներ, դամբարանադաշտեր) և փոքրածավալ (հուշակոթողներ՝ վիշապ, մենհիր, խաչքար, ևն) սրբազան օբյեկտները: Դեռևս Ա. Քալանթարը հետազոտելով Արագածի հարավային լանջերի հուշարձանները նշում է դամբարանադաշտերի մի քանի համակարգ, որոնք ներառում են ողջ տարածաշրջանը, ընդսմին հիշատակելով նաև նույն համակարգերում այլ տիպի հուշարձաններ (մեգալիթյան հուշարձաններ, պատեր, աշտարակներ)¹¹: Հոգևոր-ծիսական տարածքի կազմակերպման յուրատեսակ օրինակ են Ալ լճերի համալիրները (ԱՀ Շահունյանի շրջան)¹²: Բարձր լեռնային մարգա-

¹ Տե՛ս Գնունի Ա., Հայաստանում քաղաքագոյացման հիմնահարցի շուրջ // «Կեն», 2010, թիվ 4, էջ 92, Թադևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 232-235, 242:

² Տե՛ս Զալալբեկյան Լ., Մոխրաբլուրի պատվարները // «Պատմաբանասիրական հանդես», 1975, թիվ 2, էջ 157-162:

³ Տե՛ս Քալանթար Ա., Մի հնագույն ջրաբաշխման սիստեմ Խորհրդային Հայաստանում // Քալանթար Ա., Հայաստանը քարե դարից միջնադար, Ե., 2007, էջ 281-297,

⁴ Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи Санкт-Петербург, 1832, с. 420-421, Ա. արք. Մխիթարեանց, Դեպի Արարատ, Թիֆլիս, 1904, էջ 86-88:

⁵ Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Ա. Գնունիի, Լ. Մկրտչյանի:

⁶ Տե՛ս Սարգսյան Գ., Գնունի Ա., Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 154-158:

⁷ Տե՛ս Գնունի Ա., նշվ. աշխ., էջ 100-106:

⁸ Palmieri A., Excavations at Arslantepe, Malatya // «Anatolian Studies (then-AS)», vol. XXXI, 1981, p. 207, նույնի՝ Excavations at Arslantepe, Malatya, 1982 // «AS», vol. XXXIII, 1983, p. 102.

⁹ Sagona A., The Caucasus region in the Early Bronze Age // «British Archaeological Report (then- BAR), International Series» 214, Oxford. 1984, P 2, p. 64, Palmieri A., Excavations at Arslantepe, Malatya, p. 207.

¹⁰ Palmieri A., Sertok K., Chernikh E., From Arslantepe to Arsenical Copper Technology in Eastern Anatolia // «Between the Rivers and over the Mountains. Archaeologica Anatolica et Mesopotamica», Roma 1993, p 319-320, Чубинишвили Т. Н., К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971, с. 56.

¹¹ Տե՛ս Քալանթար Ա., Քարե դարը Հայաստանում // Ա. Քալանթար, Հայաստանը քարե դարից միջնադար, էջ 197-204:

¹² Ալ լճերը հայ գիտական գրականության էջերում առաջին անգամ հիշատակում է Հ. Դևոնդ Ալիշանը որպես «Ալլահ կեոլ», ինչն ինքնին մատնանշում է տարածքի ծիսական նշանակությունը (Ալիշան Դ.,

գետինների գոտում (ծ. մ. 2750-2850 մ բարձրության վրա), երկու լճերի շուրջ տարածվող պարփակ միջավայրում, կենտրոնացված են տարածամանակյա և բազմաբնույթ հուշարձաններ (դամբարաններ, մեգալիթներ, ժայռապատկերներ): Դամբարանադաշտերի հիմնական հատվածը (կրոնիկներ և մեծ դամբանաբլուրներ) սփռված է Մեծ Ալ լճի ափի պարագծով, լճի առափնյա շրջանում: Ալ լճերի բացառիկ հուշարձաններից է Մեծ Ալ լճի ափով Վարդենիսի ուղղությամբ, քարացրոնների մեջ կառուցված մոտ 1 մ բարձրությամբ և մոտ 8 կմ ձգվող պատը՝ իր առանձին ճյուղավորումներով: Հուշարձանախումբը եզերող պարսպի հետ օրգանապես կապված են այսպես կոչված հսկայի տները (օղուզները)՝ քարային կուտակումներ, որոնց կենտրոնական հատվածում կառուցված են խցեր: Ալ լճերի հսկայի տները տարբերվում են ինչպես չափերով, այնպես էլ խցերի քանակով (մինչև 12) և կից կառույցներով: Այսպես, Վարդենիսի տարածաշրջանի Մաքենիս գ. մոտ գտնվող հսկայի տանը կից կառուցված էր աշտարակատիպ շինություն: Այս համատեքստում պետք է դիտել նաև Ալ լճերի ժայռապատկերները, որոնք կենտրոնացված են Փոքր Ալ լճի ավազանում և Գորտագետի հունով: Տարածքի կոթողային հուշարձանների թվին են պատկանում երկու վիշապաքարերը, որոնցից մեկը (ծկնակերպը) տեղադրված էր անմիջականորեն Մեծ Ալ լճի ափին՝ ընդարձակ դամբանաբլուրի վրա, իսկ երկրորդը (ցլակերպը) տարածքի բնական սահման ծառայող լեռներում, Արփա գետի ակունքների մոտ: Նմանատիպ բարձր լեռնային սրբավայրեր հավաստված են Այլաղում (ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջան-ԱՀ Շահումյանի շրջան), որտեղ համալիրն իր մեջ ներառում է մի քանի դամբարանադաշտ, ժայռապատկերների համալիրներ, հսկայի տներ և օրթոստատ քարերով օղակված պաշտամունքային կառույց կենտրոնական վիշապանման կուռքով, Սև լճի ավազանում (ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջան-ԱՀ Քաշաթաղի շրջան), որտեղ հավաստված են հսկայի տներ և դամբարանադաշտեր¹:

Ինչպես լանդշաֆտի սոցիալ-տնտեսական բաղադրատարրի պարագայում է, այստեղ ևս լանդշաֆտի մոդելավորումը առկա է ոչ միայն մակրոմակարդակում: Դրա մասին են վկայում դամբարանադաշտերը կամ դրանց առանձին հատվածները ցանկապատող պատերի (Ուջան², Կապանի Շահումյանի դամբարանադաշտ, Այգեշատ³, Լեռնամերձ, Հայթաղ, Նորակերտ) առկայությունը, դամբարանադաշտերում գտնվող պաշտամունքային կառույցները (Թալին⁴, հարթակները (Շահումյան⁵), զոհասեղանները (Այգեշատ, Ուջան⁶) աշտարակները (Այգեշատ, Նորակերտ, Հայթաղ, Լեռնամերձ)⁷ ներքին արահետները (Բերդիկ⁸, Հայթաղ, Այգեշատ¹), ժայռապատկերները (Սևասար, Լեռ-

Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 206): Տարածքի հուշարձանների մասի տես՝ Фараджева М., Наскальное искусство Азербайджана, Баку 2009, с. 192, Սիմոնյան Հ., Քարվաճառի շրջանի հայկական հուշարձանների քարտեզ, Ե., 1996), Сарсян Г., Гнуні А., Новые данные о культе и религии в восточных областях Армянского нагорья во II-III четвертях I тыс. до н. э. Местные традиции и инокультурное влияние // «Археологические Вести», т. 21, С.-Петербург, 2014, с. 112), 2015-2016 թթ. հետազոտությունները՝ ԵՊՀ արշավախմբի:

¹ Հետազոտությունները Ա. Բորոխյանի, Ա. Գնունիի, Գ. Սարգսյանի, Գ. Խաչատրյանի:

² Վժան-6 աշտարակի պեղումները՝ Լ. Մկրտչյանի:

³ Տե՛ս Թորոսյան Ռ., Այգեշատի պեղումների 1971 թ. օրագիր, Էջմիածնի պատմաազգագրական թանգարանի Ռ. Թորոսյանի ֆոնդ, Հ. Ավետիսյան, Այգեշատի դամբարանադաշտի ուսումնասիրությունը, // «Բանբեր Երևանի համալսարանի», 1996, թիվ 2, էջ 156:

⁴ Տե՛ս Սարգսյան Գ., Թալինի մ.թ.ա. III հազ. հուշարձանի պեղումները // «ՀՍՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ», Ե., 1989, էջ 9-10:

⁵ Տե՛ս Թադևոսյան Ա., Գնունի Ա., Մկրտչյան Լ., Շրեշ բլուր // «Մեծամորյան ընթերցումներ» I (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2017 թ., էջ 30:

⁶ Аветисян Г., Гнуні А., Мкртчян Л., Бобохян А., Опыт археологической типологизации некоторых памятников связанных с функцией перехода эпохи бронзы и железа в Закавказье // «Эпохи», том XXV (-2017), кн. 2, с. 320, рис. 002.

⁷ Տե՛ս Մկրտչյան Լ., Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան աշտարակատիպ կառույցները // «Մեծամորյան ընթերցումներ» I, էջ 298-317:

⁸ Տե՛ս Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորոխյան Ա., Սարգսյան Գ., Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Ե., 2015, էջ 93-104:

նամերծ, Մուրադ թափա), «հսկայի տները» Ալ լիճ, Սև լիճ: Որոշ դամբարանադաշտերում (Նորակերտ, Արդար Դավիթ²) դիտարկվում է յուրատեսակ «բջջային» կառուցվածք, երբ առանձին դամբարանախմբերը կենտրոնացած են հովհարաձև հարթակների շուրջ:

Սկսած մ. թ. ա. III հազ. Հայկական լեռնաշխարհում ձևավորվում է նաև բնակավայրերում հանրային ծեսի համար նախատեսված կենտրոնական հատվածի գատման գործընթացը: Այսպես, օրինակ, Մոխրաբլուր բնակատեղիում կենտրոնական սրբատեղին տեղադրված էր հրապարակում: Ծեփվածքի մեջ ներդրված փայլարի բելորների շնորհիվ շինությունը շողում էր արևի լույսի տակ հակադրվելով բնակավայրի հում աղյուսե գորշ ճարտարապետությանը³: Լեռնամերձի բնակատեղիում հավաստված է քարերով օղակված արտաքնապես չկառուցապատված հատվածում ժայռային ելուստ 10 մ. տրամագծով և 3 մ. բարձրությամբ ամրացված և կցոնված ժայռաբեկորներով: Ելուստը ստորին հատվածում օղակված է ուղղանկյուն շինություններով: Շինությունների արտաքին պատերից սկիզբ են առնում դեպի արևմուտք շողածև տարածվող պատաշարերը⁴: Արդյունքում ձևավորվում է յուրատեսակ «դատարկության ճարտարապետություն», որտեղ մի կողմից դատարկ տարածքը հանդիսանում է համալիրի հիմքը⁵, մյուս կողմից՝ համալիրում գտնվող «տեսանելի» շինությունը կամ կերտվածքն ինքնին արժևորում է չկառուցապատված «անտեսանելի» հատվածը, որոշակիորեն սրբագործելով այն⁶:

դ. Բազմաֆունկցիոնալ լանդշաֆտային համալիրներ: Լանդշաֆտային ճարտարապետական համալիրներում նշված գործոնները սովորաբար հանդես են գալիս փոխկապակցված, միավորվելով մեկ ամփոփ տարածքում՝ ստեղծելով յուրատեսակ բազմաֆունկցիոնալ լանդշաֆտային համալիր: Ավելին, բաղադրատարրերից յուրաքանչյուրը մեծապես արժևորվում է հենց այդ կապերի առկայությամբ⁷: Այս սիմբիոզի պատճառներից մեկը կարելի է համարել այն, որ հին մարդու համար ողջ կյանքը պարուրված էր մոգական պատկերացումներով, իրականությունն ամբողջովին միստիկ էր⁸: Տարբեր բաղադրատարրերի համադրման առումով հատկանշական է Կոտայքի սարահարթի օրինակը: Այստեղ գետահովիտների երկայնքում սիմվոլիկ հարթավայրերում և սարահարթերում ծ. մ. 1100-1200 մ. բ. տեղադրված են բնակավայրերը, ինչպես նաև երկրագործության և անասնապահության նպատակով օգտագործվող տարածքներ, 1200-1700 մ. բ. ընկած տարածքներն օգտագործվում էին կայանների, ամրացված բնակավայրերի, ամրոցների, դիտակետերի և թաղումային համալիրների կառուցման համար, 1700-2500 մ. բ. թեք լավային սարահարթերը օգտագործվում էին պաշտպանական նպատակով, ժամանակավոր բնակավայրերի կառուցման, ինչպես նաև կոթողների և ժայռապատկերների կերտման համար, 2500-3200 մ. բ. ընկած տարածքները օգտագործվում էին ժամանակավոր բնակավայրերի և որսորդա-հավաքչական ճամբարների կառուցման համար: Այստեղ նաև տարածվում են ժայռապատկերները⁹:

¹ Տե՛ս Մկրտչյան Լ., Հայաստանի Հանրապետության տարածքի աշտարակատիպ հուշարձանների հաշվառումը և բնութագրիչը // «Հայագիտության հարցեր», 2018, թիվ 3, էջ 113, նկ. 6:

² Տե՛ս Մկրտչյան Լ., «Արդար Դավիթ». առասպել և իրականություն // «Էջմիածին» 2017, է, էջ 111-116:

³ Арешян Г., Искусство куро-аракской культуры // «Материалы II международного симпозиума по армянской культуре (отдельный оттиск)», Е., 1979, с. 8-9.

⁴ Հետախուզական աշխատանքները Լ. Մկրտչյանի, Ա. Գնունիի: Այսօրինակ կառույցներից ևս երկուսը՝ հաստատագրվել են Ոսկերասում (Ոսկերաս-1) և Կաքավաձորում (Կաքավաձոր-1):

⁵ Иванов С., Эссе о пустоте или что такое архитектура // «Архитектурный Петербург» 2016, N 5, с. 20-21.

⁶ Хайдегер М., Исток художественного творчества, Москва, 2008, с. 138-139.

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Леви-Брюль Л., Сверхъестественное в первобытном мышлении, Москва, 1994, с. 27-28.

⁹ Аветисян Г., Аветисян П., Гаспарян Б., Габриелян И., Наапетян С., Овсепян Р., Аракелян Д., Палео- и археосреда прилегающих территорий Арамусского памятника // «Տարեգիրք», Ե., 2005, էջ 219-220:

Հնագույն Հարժիսի հանգուցային դերը պայմանավորված էր ինչպես տարածքի բնական հարստություններով¹, այնպես էլ ճանապարհների (Լծեն-Տաթև, Նախիջևան-Պարտավ) խաչմերուկին գտնվելու հանգամանքով²: Ժամանակակից գյուղի տարածքում գտնվող հնագույն բնակատեղիները տեղադրված են սարահարթի վրա: Գյուղում և նրա մերձակայքում հաստատագրված են մի շարք ամրոցներ (օր՝ Քարաբլուր, Մթնաքար), բնակատեղիներ և դամբարանադաշտեր: Հարժիսի մշակութային լանդշաֆտի ձևավորման գործում կարևոր դեր ուներ նաև հոգևոր-ծիսական բաղադրատարրը (դամբարանադաշտեր, մենաքարեր, մարդակերպ կոթողներ): Նշված համատեքստում կարելի է դիտարկել նաև Լեռնամերձի հուշարձանախումբը: Այն սփռված է ժամանակակից գյուղից դեպի հյուսիս զբաղեցնելով բլրաշարերի լանջերը և գագաթները: Հուշարձանախումբը արևմուտքից և հյուսիս-արևմուտքից պարփակվում է օրթոստատ դրված քարերի ուղղածիք շարքով: Ընդարձակ դամբարանադաշտն իր մեջ ընդգրկում էր արևմուտքում և հյուսիսում տեղադրված աշտարակներ, նրանց միջև սփռվող տարբեր կառուցվածքի դամբարաններ, ժայռապատկերներ, արհեստական դարավանդներին տեղադրված «հսկայի տներ» պատերի և հարթակների համակարգեր արևելյան հատվածում: Բնակատեղին գտնվում է դամբարանադաշտից հյուսիս արևելք: Լեռնամերձի հուշարձանախումբը հարավից կցվում է Ոսկեհատի պատմամշակութային համալիրին: Այստեղ բարձրադիր վայրում գտնվող դամբարաններ, աշտարակատիպ կառույցներ, դոմենատիպ շինություններ ներառող ծիսապաշտամունքային հատվածը արևելքից զատվում է բնակատեղիից միաշար պատով:

Որպես առանձին լանդշաֆտային համալիր կարելի է դիտարկել նաև Կոշի Արագած և Ուջանի Մոսկան ամրոցների միջակայքում տարածքը ընդգրկող յուրատեսակ «սրբազան եռանկյունը»³: Այս տարածքը զրեթե ամբողջությամբ ծածկված է դամբարաններով: Ժայռոտ բլուրների և խորը կիրճերով զատված բարձունքների գագաթներին և դարավանդներին տեղադրված են աշտարակատիպ շինություններ⁴: Հատկանշական է, որ աշտարակների հատակագիծը կախված է դրանց տեղագրությունից: Այսպես, բարձունքներին տեղադրված են բլրորածև, ուղղանկյուն, պայտածև, դարավանդներին՝ քառակուսի, օվալ, իսկ ստորոտներին՝ ուղղանկյուն աշտարակներ: Շատ հաճախ աշտարակները միանում էին իրար և կիկլոպյան ամրոցներին քարաշարերով՝ ստեղծելով յուրօրինակ «հանգույցներ»: Բարձունքներին տեղակայված աշտարակները ստանում են կենտրոնական դիրք՝ տեսողական կապի մեջ գտնվելով ինչպես նմանատիպ այլ աշտարակների, այնպես էլ հարակից կիկլոպյան ամրոցների հետ: Սովորաբար աշտարակների շրջակայքում լինում են դարավանդներին թեքությամբ տեղակայված, դեպի ներքև կլորացող հիմքով (հատակագծում շատ հաճախ պայտի տեսք են ստանում), մեկ-երկու շար բարձրությամբ կառույցներ, որոնք ավարտվում են «կեղծ թաղով»: Հետաքրքիր է որ որոշ տեղերում հանդիպում ենք այս շինությունների և աշտարակների հիբրիդի, երբ աշտարակը սրահում կեղծ թաղով, կամ պարզապես սալով ծածկված կառույց է: Օվալածև աշտարակները, որոնք կառուցված են բարձունքների կամ ժայռոտ ելուստներով դարավանդների վրա. պատված են կիսաշրջանածև համակենտրոնություն ունեցող հարթակներով: Հետաքրքիր է, որ այս հարթակների փռվածքները զրեթե միշտ ուղղված են Մասիսին:

Պատմամշակութային լանդշաֆտի ձևավորման փուլերը և բնորոշ գծերը: Լանդշաֆտի մշակութայինացման գործընթացն ամենևին էլ համաչափ չէ: Եթե զարգացման վա-

¹ Միջնադարում գյուղից 2 կմ հեռավորության վրա արդյունահանվում էր հալեմիտ՝ արժիճի հանքաքար (Григорян Г., Очерки истории Сюника в IX-XIV вв. Е., 1990, с. 175):

² Григорян Г., նշվ. աշխ., էջ, 274, Բարխուդարյան Ա., Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ // «Դիվան հայ վիճագրության», պր. II, Ե., 1960, էջ 81, Հասրաթյան Մ., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Ե., 1985, էջ 70:

³ Հետախուզական աշխատանքներ և պեղումներ՝ Լ. Մկրտչյանի:

⁴ Աշտարակատիպ կառույցների մասին տե՛ս Մկրտչյան Լ., Հայաստանի Հանրապետության տարածքի աշտարակատիպ հուշարձանների հաշվառումը և բնութագիրը, էջ 108-119, նույնի՝ Հայաստանի աշտարակատիպ շինությունների ուսումնասիրության պատմությունից // «Լրաբեր հասարակական գիտությունների», 2018, թիվ 3, էջ 357-365:

ղագույն փուլերում բնական գործոնի նշանակությունը վճռորոշ է, ապա հետագա ժամանակաշրջաններում սոցիալական և հոգևոր գործոնները ակտիվորեն վերափոխում են բնական տեղանքը¹: Այս գործընթացը կարելի է դիտարկել երեք փուլերով.

ա. հասարակության զարգացման նախնական փուլերում մարդը սահմանափակվում էր միայն հարմարեցնելով բնական տեղանքը կենսագործունեության պայմաններին: Այս գործընթացի վկայություն կարելի է համարել հումքի պաշարների մերձակայքում բնակության վայրերի տեղադրումը, ինչպես, օրինակ, պալեոլիթյան արհեստանոց-կայանների տեղադրումը հումքի վանակատի ելուստների գոտում²: Առավել ուշ շրջանում կարելի է արձանագրել օգտակար հանածոների (պղնձի³, աղի⁴) հանքերի շահագործումը:

բ. Երկրորդ փուլը ենթադրում է բնական տեղանքի վերափոխումը: Այսպիսի վերափոխման օրինակ կարելի է համարել ժայռային կերտվածքների ստեղծումը Ագարակում, Գյուլիբուլաղում, Բջնիում և այլ հուշարձաններում⁵:

գ. Հասարակական կազմակերպման մեխանիզմների բարդացմամբ (կոմպլեքս հասարակություններ) ստեղծվում է նոր տեղանք, որտեղ թելադրող տնտեսական (բնակավայրերի ազլումերացիաներ, բնակավայրային հիերարխիա, մասնագիտացված բնակավայրեր, արհեստական ջրագրական ցանց) սոցիալական (ադմինիստրատիվ կենտրոններ) և հոգևոր (պաշտամունքի կազմակերպման հիերարխիա) գործոններն են:

Պետք է սակայն նշել, որ այս երեք փուլերի հաջորդականությունը պարզ գործընթաց չէ, քանի որ բնության հետ փոխառնչվելու նոր ձևերը որոշակի զարգացում են ապրում մինչև տիրապետող դառնալը: Մինևույն ժամանակ հին ձևերը շարունակում են գոյատևել նոր պայմաններում:

Բազմաֆունկցիոնալ լանդշաֆտային համալիրների տրանսֆորմացիան և հիշողության լանդշաֆտի ձևավորումը: Արդեն ձևավորված պատմամշակութային լանդշաֆտը ենթակա է հետագա ձևափոխումների: Դեռևս XVI դարից եվրոպական հեղինակները նկարագրելով պատմական հուշարձանները և շրջապատող լանդշաֆտը դիտարկում էին դրանք պատմական հիշողության համատեքստում: Ընդ որում, եթե սկզբնական շրջանում այդ համատեքստը դեռևս կրում էր դիցաբանական բնույթ, հանգելով կոսմոգոնիկ առասպելների (օր. ՝ Ջրհեղեղ)⁶, ապա հետագայում ակնհայտ է ձգտումը կապել դրանք սեփական ժողովրդի իրական⁷ կամ առասպելական⁸ պատմության հետ: Այս առումով լանդշաֆտային միավորը ունի զարգացման որոշակի ներքին տրամաբանություն, երբ բաղադրատարրերից մեկը կարող է զբաղեցնել գերիշխող դիրք, երկրորդ պլան մղելով այլ բաղադրատարրերը: Այսպես, լքված բնակավայրը կարող է դառնալ

¹ Այսպես, քաղաքների առաջացումը հանգեցրեց ոչ միայն բնակլիմայական, այլև կենսաբանական փոփոխությունների (Dineanze D., Environmental Archaeology: Principles and Practice, Cambridge 2000, p. 16-17):

² Հմմտ. Аветисян Г., Аветисян П., Гаспарян Б., Габриелян И., Наапетян С., Овсепян Р., Аракелян Д., նշվ. աշխ., էջ 220, Гаспарян Б., Наапетян С., Саргсян Г., Габриелян И., Каменный век Таширского плато // «Տարեգիրք», էջ 241:

³ Հմմտ. Геворкян А. Ц., Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Е., 1980, с. 23-25.

⁴ Դեռևս 1860 թթ. Նախիջևանում հետզոտողների ուշադրությունը գրավել էին խորը հորերը, որոնք ամենայն հավանականությամբ հանդիսանում էին հնագույն հանքահորերի հետքեր (Надеждин П., Кавказский край: природа и люди, Тула. 1901, с. 234): Առաջին գտածոներն այստեղ արձանագրվել են 1870 թ. Ֆ. Բայերնի կողմից: Դրանք քարե կացիններ և սեպեր էին, որոնց մի մասը բերվել էր Թիֆլիսի Կովկասյան թանգարան (Коллекции Кавказского музея, т. V Археология, сост. гр. П. Уварова, Тифлис. 1902, с. 192):

⁵ Аветисян П., Предварительные результаты раскопок памятника Агарак // «Археология, этнология и фольклористика Кавказа», Св. Эчмиадзин 2003, с. 52-58, Հակոբյան Հ., Գնունի Ա., Դիտարկումներ ճանապարհի և փողոցի գործառնական և խորհրդանշական գործառնությունների վերաբերյալ, // «Էջմիածին» 2007, Թ, էջ 89-90, Դարիբյան Ի., Հակոբյան Հ., Գնունի Ա., Խաչատրյան Գ., Վարթանեստվա Տ., Բջնիի հուշարձանները // «Հուշարձան», Զ, Ե., 2010, էջ 71:

⁶ Հմմտ. Picardt J., Annales Drenthiae, Amsterdam, 1660, p. 23.

⁷ Հմմտ. O. Magno, Historiae de gentibus septentrionalibus, Antverpiae 1558, p. 24, J. Auberry, Wiltshire. The Topographical Collection, London. 1862, p. 316.

⁸ Brome J., Travels over England, Scotland and Wales, London, 1700, p. 45.

սրբագործված վայր, այնտեղ կարող է տեղադրվել դամբարանադաշտ՝ ինչպես Կարմիր Բլուրում հետուրարտական ժամանակաշրջանում¹, առօրյա օբյեկտը (օրինակ դարպասը կամ աշտարակը) կարող է ունենալ նաև սակրալ նշանակություն (օրինակ Վանի միջնաբերդի արևելյան դարպասը, որտեղ տեղադրված էր Իշպուլինիի արձանագրությունը, Վաղարշապատի Արեգ դուռը, որի մոտ կառուցված էր Միհրի տաճարը, Տաթևի Դարպասի եկեղեցին)², հիշողության լանդշաֆտային միավորը կարող է կոնսերվացվել (օրինակ Թալինի մ. թ. ա. III հազ. պաշտամունքային կառույցը)³:

Եզրակացություններ: Նշված օրինակներից հետևում է, որ արդեն ք. ա. III-1 հազ. Հայաստանի տարածքում առկա էր տարածության մոդելավորման գաղափարը, որը ենթարկվում էր որոշակի սկզբունքների (հաշվի էին առնում բնական տեղանքի առանձնահատկությունները, սոցիալ-տնտեսական և կրոնաժխական բաղադրատարրերը)⁴: Ավելին, բրոնզ-երկաթեդարյան Հայաստանում տեղանքի մոդելավորումից բացի, կան որոշ տվյալներ լանդշաֆտի պատկերման վերաբերյալ⁵: Դրանցից է Ալ լճերի ավազանում, Փորաք լեռան վրա հայտնաբերված ժայռապատկերը, որի վրա, ամենայն հավանականությամբ, պատկերված է Փորակ հրաբխի ժայթքումը⁶: Տեղանքի մոդելավորման պատկեր է հանդիսանում Մեծամորում գտնված ժայռաքանդակը, որը վերարտադրում է Արագած լեռան ջրամատակարարման համակարգը⁷: Բնակավայրերի հատվածներ և բնակարանային համալիրներ են պատկերված մի շարք ժայռապատկերներում⁸: Հատկապես հիշարժան են տաճարների և սրբարանների մանրակերտերը⁹:

Гайк Аветисян, Артак Гнуни, Арсен Бобохян, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОСОБЕННОСТИ АРХЕОЛОГИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ ЛАНДШАФТА. Начиная с античного периода вопрос о восприятии и влияния ландшафта находится в центре внимания ученых. Сегодня также в процессе осмысления закономерностей развития древних обществ проблема взаимодействия человека и природной среды становится главным вопросом наук, изучающих прошлое. В данной статье делается попытка определения и типологизации понятия историко-культурный ландшафт: на примере памятников Армении эпохи бронзы и железа демонстрируются основные формы его выражения. Специально подчеркивается важность Географической информационной системы для обсуждения этих вопросов, метод который дает археологии новые инструменты, посредством которых в будущем возможно будет обосновать или опровергнуть исторические представления о географической среде.

Ключевые слова: древний период, археология, закономерность, древние общества, природная среда, типология, историко-культурный ландшафт, памятник, методы, эпоха бронзы.

Hayk Avetisyan, Artak Gnuni, Arsen Bobokhyan, Levon Mkrтчyan, Natalia Avetisyan, FEATURES OF ARCHAEOLOGICAL STUDY OF LANDSCAPE. Since the Classical period the problem of perception and impact of landscape was in the centre of human mind. Also

¹ Հմմտ. Мартиросян А. А, Город Тейшебаини, Е., 1961, с. 137.

² Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 38, Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 213:

³ Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 9-10:

⁴ Այս գործընթացը Ա. Լեֆերն անվանում է «տարածության ներկայացում» (Լեֆեբր А., նշվ. աշխ., էջ 43):

⁵ Այս գործընթացը Ա. Լեֆերն անվանում է «ներկայացվող տարածություն» (նույն տեղում, նշվ. աշխ., էջ 43):

⁶ Avagyan A., Karakhanian A., Philip H., Une éruption volcanique gravée dans le roc // «Pour la Science», 2003, թիվ 305, p. 13-14.

⁷ Խաչատրյան Ս., Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխման համակարգի փորագրված գծագիրը // «Պատմաբանասիրական հանդես» 1971, թիվ 3, էջ 128-137:

⁸ Ахундов Д., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, с. 26-27.

⁹ Есаян С. А., Древняя культура племен Северо-восточной Армении, Е., 1976, с. 43, 229.

today in evaluations of ancient societies an essential role is given to the problem of mutual influences of human with its environment, which gradually becomes pivotal for disciplines investigating the past. In the present article a trial is made to define and typologize the conception of historical and cultural landscape and to demonstrate the main ways of its reflection by case of Bronze and Iron Age Armenia. The role of Geographic Information System is especially underlined in consideration of such problems. It gives new tools for archaeology, which will enable in future to confirm or to deny the former perceptions of landscape based on historical data.

Key words: ancient period, archeology, regularity, ancient societies, natural environment, typology, historical and cultural landscape, monument, Bronze Age.